Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ի Ց

29 սեպտեմբերի 2016 թվականի N 38

37. 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ
ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հավանություն տալ 2017 թվականի գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերին՝ համաձայն հավելվածի, և դրանք սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի նախագծի կազմում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2016 թ. սեպտեմբերի 30
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2016 թ.
սեպտեմբերի 29-ի նիստի N 38
արձանագրային որոշման

ՑԱՆԿ

2017 ԹՎԱԿԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ

	Ծրագրի անվանումը	**Կազմակերպության անվանումը**	**Ֆինանսավորման ծավալը/հազ. դրամ/**
	Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ		**1848056.1**
		ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե-**ընդամենը**	**206586.0**
1	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Տեղեկատվական անվտանգության գիտահետազոտական կենտրոն» ծրագրին պետական աջակցություն	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	10868.0
2	«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային ռեսուրսների կառավարման հայեցակարգերի և ջրային ենթակառուցվածքների շահագործման տեղային կանոնակարգերի մշակում» ծրագրին պետական աջակցություն	«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ	20000.0
3	ՀՀ կրթության և գիտության նախարարության «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Մատենադարանի մեծադիր ձեռագրերի, հազվագյուտ փաստաթղթերի և հնատիպ գրքերի կոնսերվացում ու գիտատեխնիկական մշակում» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ կրթության և գիտության նախարարության «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպություն	21000.0

4	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Ամպային հաշվարկների միջավայրի ստեղծում գիտական և կիրառական խնդիրների լուծման համար» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստի-տուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	25000.0
5	ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարան-ների և պատմական միջավայրի պահպա-նության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Մեծամոր պատմահնագիտական արգելոցի համա-կողմանի ուսումնասիրության V փուլ (երկաթեդարյան քաղաքային թաղամասեր և մ.թ.ա. XV/XIV - XI/IX դդ դամբարանադաշտ)» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ մշակույթի նախա-րարության «Պատմա-մշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայ-րի պահպանության ծա-ռայություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	15000.0
6	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները, ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Հնագիտության և ազգագրության ինստի-տուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	9918.0
7	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Գալարմինի կիրառա-կան նշանակությունը տարբեր ինֆեկցիոն հիվանդությունների դեպքում» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտ» պետա-կան ոչ առևտրային կազմակերպություն	15000.0
8	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Հայաստանի Հանրապե-տությունում արտադրված սննդամթերքում պեստիցիդների մնացորդների մոնիթորինգ» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	15000.0

9	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Հայկական գենոֆոնդի ուսումնասիրությունը և քարտեզագրումը» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	12000.0
10	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության «Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության «Սարքավորումների մետաղի վիճակի հսկման ակուստիկ էմիսիոն մեթոդի մշակում» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության «Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերություն	9800.0
11	ՌԴ կրթության և գիտության նախարարության և ՀՀ կրթության և գիտության նախարարության «Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան» բարձրագույն մասնա-գիտական կրթության պետական ուսումնական հաստատության «ՀՀ արտաքին միգրացիոն իրավիճակի եռամյա (2015-2017թթ.) մշտադիտարկում՝ ընտրանքային հետազոտության միջոցով» ծրագրին պետական աջակցություն	ՌԴ կրթության և գիտության նախարարության և ՀՀ կրթության և գիտության նախարարության «Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան» բարձրագույն մասնագիտական կրթության պետական ուսումնական հաստատություն	10000.0
12	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Կլիմայի փոփոխման և Սևանա լճի մակարդակի բարձրացման պայմաններում Հայաստանի համար ռազմավարական նշանակություն ունեցող լճային էկոհամակարգի և նրա կենսառեսուրսների կարիոլոգիական հետազոտում» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	16000.0

13	ՀՀ կառավարության աշխատակազմի «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի «Տեղեկատվական անվտանգության թեմայով ձեռնարկի ստեղծում» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ կառավարության աշխատակազմի «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ	10000.0
14	ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Հայոց արքաների դամբարանների հետազոտում» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	17000.0
		ՀՀ պաշտպանության նախարարություն	**1641470.1**
15	«Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակներում կատարվող Հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գծով պետական պատվեր		1641470.1